



«Ոսկե ծիրան» միջազգային 10-րդ հորեյլանական կինոփառատոնի հանրաճանաչները խնամակալում են Երևանի կենդանաբանական այգու կենդանիներին



Երևանի կենդանաբանական այգու կամավորները

Այս տարի «Ոսկե ծիրան» կինոփառատոնը Հայաստանում անցկացվեց 10-րդ անգամ: Սա նշանակում է, որ այն հորեյլանական էր, իսկ հրավիրված հյուրերը՝ հատուկ: Հրավիրված էին աշխարհահռչակ ճանաչում ունեցող բազմաթիվ կինոռեժիսորներ, դերասաններ, արվեստի գործիչներ: Նրանց համար հետաքրքիր էր գտնվել Հայաստանում, քանի որ կինոփառատոնի



կինոփառատոնի հյուրերն առանձնանում են յուրովի: Նրանցից շատերն արդեն այգու որոշ կենդանիների խնամակալներն են: Այս տարվա հուլիսին Երևանի կենդանաբանական այգի կրկին այցելեցին կինոփառատոնի մշտական հյուրերից կանադահայ հայտնի կինոռեժիսոր Ատոմ Էգոյանը և նրա կինը՝ դերասանուհի Արսինե Խանջյանը: Այցի առիթն ամրագրվել էր դեռ երեք տարի առաջ, երբ Արսինե Խանջյանը ստանձնել էր Հայկական մուֆլոնների մեկի խնամակալությունը: Մայր մուֆլոնը հրաժարվել էր խնամել իր նոր ծնված ձագին, իսկ այգու աշխատակիցները հանձն էին առել ձագուկի հետագա խնամքը: Պատմությունն այնքան էր հուզել դերասանուհուն, որ նա առանց երկմտելու որոշեց խնամակալել փոքրիկ մուֆլոնին: Մուֆլոնի անունն ընտրել է Արսինե Խանջյանը՝ վերջինիս անվանելով Գանձ: Արսինե Խանջյանի և Ատոմ Էգոյանի հետ միասին «Ոսկե ծիրան» միջազգային կինոփառատոնի հյուրերի շարքում էր նա Ալբերտ Վիդերշիլդը, ով արդեն երկրորդ տարին է, ինչ իր ընկերոջ հետ միասին համացանցով խնամակալում է բվերից մեկին՝ անվանելով նրան Տեվյե: Տեվյեի հետ հանդիպումն ուղեկցվեց նաև խնամակալության վկայականի հանձնմամբ և թռչունի մասին հետաքրքրաշարժ տեղեկատվական թերթիկի տրամադրումով: Ալբերտ Վիդերշիլդը, ով Համբուրգի կինոփառատոնի տնօրենն է և հայերի մեծ բարեկամը, քաջալերում է իր ընկերներին գալ Հայաստան և ծանոթանալ Հայաստանի հարուստ բնությանն ու մշակութային արժեքներին: «Ոսկե ծիրանի» հյուրերից ևս մեկը՝ թուրք մշակութաբան և «Անադոլու Կյուլտուր» ծրագրի ղեկավար Օսման Կավալան Լույսաբե խնամակալել է Հայկական կրիաներից մեկին (Testudo graeca armeniaca), ում անվանել է Հակոբ:

2011 թվականից մինչև 2013 թվականի հուլիս ամիսը Երևանի կենդանաբանական այգի 1 տարի կամ 6 ամիս ժամկետներով կամավորական սկզբունքով արտերկրից Հայաստան են ժամանել թվով 7 կամավորներ, որոնցից չորսը եղել են Գերմանիայից: Նրանցից մեկը Մայթե Բվիչն է, ով եկել է Գերմանիայի Գոռս Բոամշտետ (Ստորին Սաքսոնիա) քաղաքից և շուրջ մեկ տարի է, ինչ Հայաստանում է: Բվիչն իր հայրենիք կվերադառնա օգոստոսի 22-ին իսկ մինչ այդ նա շարունակում է ամեն օր մեծ նվիրվածությամբ վաղ առավոտից շտապել կենդանաբանական այգի՝ օգնելու կենդանաբանական այգու աշխատակիցներին: Մեկ տարվա ընթացքում Մայթեն արդեն սովորել է խոսել հայերեն և խոստովանում է, որ Հայաստանից իր հետ Գերմանիա կտանի հայերի հյուրասիրությունը: «Եթե ես ինձ այստեղ լավ չզգայի վաղուց հեռացած կլինեի»,- անկեղծանում է նա և ավելացնում, որ կկարողի իր բոլոր ընկերներին: Ապագայում Մայթեն որոշել է դառնալ միջոցառումների կազմակերպման մասնագետ, և խոստանում է կրկին այցելել Հայաստան՝ ընկերներին տեսակցելու համար: Ի տարբերություն Մայթեի, Անի Ժամկոչյանը, ով Հայկական բարեգործական ընդհանուր միությունից է, ընդամենը 4 շաբաթ է, ինչ աշխատում է կենդանաբանական այգում որպես կամավոր: Մայթեն իր փորձով և խորհուրդներով մշտապես օգնում է Անին: Անին Լյու Յորքից է, ազգությամբ հայ, բայց հայերեն խոսել չգիտի: «Ես հաստատ որոշել եմ Լյու-Յորք վերադառնալուց հետո անպայման հայերեն խոսել սովորել, շատ եմ ափսոսում, որ հայերեն չգիտեմ»,- իր խոսքում նշում է Անին: Ե՛վ Մայթեն, և՛ Անին շատ են սիրում կենդանիներին, հատկապես ուղտայծերին: Երկուսով հաճույքով և սիրով խնամում և հոգ են տանում ոչ միայն ուղտայծերի, այլև կենդանաբանական այգու բոլոր կենդանիների մասին:



Թբիլիսիի կենդանաբանական այգու մեր գործընկերները երկօրյա այցով Երևանի կենդանաբանական այգում էին



Երկօրյա պաշտոնական այցով Երևանի կենդանաբանական այգի էին այցելել Թբիլիսիի կենդանաբանական այգու տնօրեն Չուրաբ Գուրիելիձեն, Թբիլիսիի կենդանաբանական այգու գործառնությունների գծով մենեջեր Թոմաս Գոշաձեն և Թբիլիսիի այգու EAZA խորհրդատու (մենթոր) Մարջո Հոդեմեբերը, ով Լիդերլանդների Ամերսֆուրթ կենդանաբանական այգու ավագ խորհրդատուն է: Այցի ընթացքում քննարկվեցին այգիների ապագա

համատեղ ծրագրերը: Երկու կենդանաբանական այգիներն էլ Կենդանաբանական այգիների և ակվարիումների եվրոպական ասոցիացիայի (EAZA) թեկնածու-անդամ են, որոնց համագործակցությունը սկսվել է 2013 թվականի ապրիլից, երբ Երևանի կենդանաբանական այգու տնօրեն Ռուբեն Խաչատրյանը պաշտոնական այցով Թբիլիսիի կենդանաբանական այգում էր: Առաջին հանդիպման արդյունքում այգիների միջև ստորագրվեց Փոխըմբռնման հուշագիր, ըստ որի այգիները կենդանիների բարեկեցության և բազմացման նպատակով պարտավորվում են իրականացնել կենդանիների փոխանակում այգիների միջև նվիրատվության հիմունքներով, առանց որևէ ֆինանսական պարտավորվածության, որի շրջանակներում Թբիլիսիի կենդանաբանական այգուց Երևանի կենդանաբանական այգին գերբ, կապիկներ և թռչուններ ձեռք բերեց: Հյուրերի հետ քննարկումների ժամանակ մեծ ուշադրության արժանացավ Գրանդը՝ Երևանի կենդանաբանական այգու միակ փիղը: Մարջո Հոդեմեբերը, ով ավելի քան 40 տարվա փորձ ունեցող փիղերի մասնագետ է, շատ տպավորված էր փղի ազատավանդակի վերակառուցման ընթացիկ աշխատանքներից: Գրանդ Քենդի հայ-կանադական համատեղ ձեռնարկության օժանդակության շնորհիվ Գրանդ փղի վերակառուցված ազատավանդակը կհամապատասխանի անվտանգության կանոններին և փղի խնամքի համար նախատեսված բոլոր պայմաններին: Մարջո Հոդեմեբերը նաև շեշտեց, որ Երևանի կենդանաբանական այգու փղին լավ է խնամում, չնայած որ Գրանդը դեռևս ունի ժանիքների վարակ, որը հիմնովին չբուժելու դեպքում վնաս կարող է լրջորեն հիվանդանալ և ավելացրեց, որ EAZA-ին կտեղեկացնի այս խնդրի մասին և անձամբ կհոգա փղերի լավագույն անասնաբույժների և ատամնաբուժական մասնագետների այցը Երևան կազմակերպելու համար: Այնուամենայնիվ, անգամ լավագույն կանխարգելիչ բուժումները չեն կարող բացառել կենդանիների հիվանդությունները: Այսպես օրինակ՝ Եվրոպայի լավագույն կենդանաբանական այգիներում կենդանիների անկումն հասնում է տարեկան գրեթե 15%-ի, մինչդեռ Երևանի կենդանաբանական այգում անկումը կազմում է տարեկան շուրջ 1,5%: Այս հարցին Մարջո Հոդեմեբերը պատասխանեց. «Կենդանիները նույնպես կենդանի արարածներ են, որոնք ունենում են բնական մահ: Ազատության մեջ ևորածիլների միայն 15%-ն է, որ հատում է մեկ տարեկանի սահմանը, քանի որ վայրի բնության մեջ շատ են կենդանիների սպառնացող վտանգները: Հաճախ դժվար է լինում նաև կենդանու հիվանդության աստորոշումը, քանի որ կենդանիները չեն կարող խոսել, բացատրել և միայն իրենց վարքագծի շնորհիվ կարող են ահագանգել որևէ խնդրի մասին: Հանրությունը պետք է գիտակցի, որ սա ամենևին էլ կենդանաբանական այգու անձնակազմի անփութությունը չէ և որ այգու աշխատակիցները անհնարը հնարավոր են դարձնում կենդանիների բարեկեցությունն ու անհրաժեշտ բուժումն ապահովելու համար»:

Երևանի կենդանաբանական այգում տեղի են ունենում հեքիաթի ժամեր, գրքի շնորհանդեսներ



Երևանի կենտրոնին շատ մոտ կա գեղեցիկ, կանաչապատ և քաղաքային ադմուկից կտրված մի ուրույն ու հեքիաթային վայր՝ Երևանի կենդանաբանական այգի: Այս հեքիաթային վայրում ապրում են երեխաների սիրված հեքիաթների գրեթե բոլոր հերոսները: Երբ փոքրիկներն այցելում են կենդանաբանական այգի և տեսնում կենդանիներին, միանգամից հիշում են իրենց կարդացած ու լսած հեքիաթները: Իսկ տպավորություններն ու հիշողություններն անջնջելի են լինում, երբ հեքիաթները նրանց մատուցվում են անմիջապես կենդանաբանական այգում: Երկու շաբաթը մեկ անգամ Երևանի կենդանաբանական այգին և «Բուկինիստ» գրախանութը բոլոր այցելուներին հրավիրում են «Հեքիաթի ժամ» միջոցառմանը: «Հեքիաթի ժամի» կազմակերպիչներն ընտրում են այնպիսի հեքիաթներ, որոնք երեխաներին ավելի են մոտեցնում բնությանն ու կենդանիներին՝ հոգատարություն ու բարություն սերմանելով նրանց նկատմամբ: Երևանի կենդանաբանական այգում վերջերս տեղի ունեցավ նաև երիտասարդ ստեղծագործող Լիլիթ Կարապետյանի «Մենախոսություն երկու ձայնով» գրքի շնորհանդեսը: Ներկայացվում էր երիտասարդ գրողի երկրորդ գիրքը, որը հրատարակվել է «Անտարես» հրատարակչության XXI մատենաշարով: Լիլիթ Կարապետյանի առաջին գիրքը «Ասֆալտի և երկնքի միջև» ժողովածուն էր, որի համար նա 2011-ին արժանացել է ՀՀ նախագահի երիտասարդական գրական մրցանակին: Լիլիթ Կարապետյանի համար կենդանաբանական այգին պատահական չէր ընտրված, քանի որ իր պատմվածքի հերոսներից մեկն ընտանի կենդանի է: Երևանի կենդանաբանական այգին շատ հարմար վայր է ինչպես ստեղծագործելու, այնպես էլ ստեղծագործական երեկոներ, շնորհանդեսներ կազմակերպելու և հեղինակ-հանրություն կապն ապահովելու համար: Լիլիթ Կարապետյանի գրքի շնորհանդեսը դրա վառ ապացույցն էր: Երիտասարդ հեղինակի գրքի շնորհանդեսին ներկա գտնվողները կարող էին ծանոթանալ ոչ միայն նրա գրվածքներին, այլև ժողովածուի հրատարակիչների կողմից ցուցահանդես-վաճառքում ներկայացված այլ գրողների նոր ստեղծագործություններին, հայտնի գրողների վերահրատարակություններին և մանկապատանեկան գրականության լայն ընտրանուն:

